ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1118-Ա

30 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 30.07.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

Ստորագրող՝
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1119-Ա

30 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՈՆԹԵԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 04-078-0109-0014 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի, Նորքի 9-րդ զանգվածի Վիլնյուսի փողոցի թիվ 3 շենքի թիվ 26 բնակարանի բնակիչ Արմեն Սոկրատի Թելիմյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Մոնթեավան բնակավայրի 04-078-0109-0014 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին / հիմք՝ Արմավիր մարզի Մոնթեավան համայնքի 03.07.2026թ տնտ. գրքից N 3/273 քաղվածք , և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04152VDHGBZP/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Մոնթեավան բնակավայր,12-րդ փողոց, թիվ 28 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
30 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1120-Ա

30 հուլիսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Հ. ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 76 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Հ. Պարոնյան փողոցի թիվ 76 տան բնակիչ Արշակ Ներսեսի Լևոնյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25122023-04-0072 տրված՝ 25.12.2023թ., «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 25.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04112NLGGPCA, 04112VTDGPZJ/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ծաղկունք բնակավայրի Հ. Պարոնյան փողոցի թիվ 76 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք բնակավայր, Հ.Պարոնյան փողոց, թիվ 76 բնակելի տուն,
Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք բնակավայր, Հ.Պարոնյան փողոց, թիվ 76/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
30 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1121-Ա

30 հուլիսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Արագած բնակավայրի 5-րդ փողոցի թիվ 2 տան բնակիչ Նարեկ Մայիսի Մկրտչյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 14052026-04-0006 տրված՝ 14.05.2026թ., «Մովսեսկոշին» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0160/ կողմից 25.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04052WAAKNPN, 04052MYPFS8D/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Արագած բնակավայրի 5-րդ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Արագած բնակավայր, 5-րդ փողոց թիվ 13 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Արագած բնակավայր, 5-րդ փողոց թիվ 13/1 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
30 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1122-Ա

30 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱՖԻԿ ԲԱԲԿԵՆԻ ԹԱԹԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի թիվ 3ա տան բնակիչ՝ Ռաֆիկ Բաբկենի Թաթարյանի դիմումը պարզվեց, որ / հիմք՝ տեխնիկական անձնագիր՝ տրված 02.04.1984թ., «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 21.01.2026թ. հաստատված թիվ 250 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, «Վաղարշապատ» նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 18.03.2016թ. հաստատված թիվ 1466 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 30.01.2026թ. կազմված հատակագիծ/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող 0.071 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի թիվ 31 հասցեում գտնվող 0.071 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև

15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները համարել Ռաֆիկ Բաբկենի Թաթարյանի /ծնված՝ 30.06.1958թ../ սեփականությունը:

2. 63քմ մակերեսով շինությունը համարել ինքնակամ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
30 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1123-Ա

30 հուլիսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ 04-002-0027-0048 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի թիվ 3ա տան բնակիչ Ռաֆիկ Բաբկենի Թաթարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի 04-002-0027-0048 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին/ հիմք՝ տեխնիկական անձնագիր՝ տրված 02.04.1984թ., «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 21.01.2026թ. հաստատված թիվ 250 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, «Վաղարշապատ» նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 18.03.2016թ. հաստատված թիվ 1466 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011HJYGUZM/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Վահան Տերյան փողոց, թիվ 31 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
30 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1124-Ա

30 հուլիսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 18.04.2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 617Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով կադաստրի կոմիտեի կողմից տրված գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-13072026-04-0021 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի ղեկավարի 18.04.2026թ. «Անշարժ գույքի բաժանման և հասցեավորման մասին» թիվ 617Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Առանձնացվող հատված 1-ին մասում նշված « 1 հողամաս» բառերը փոփոխել «1/1 բնակելի տուն» բառերով,

2) Առանձնացվող հատված 2-րդ մասում նշված «1/1 բնակելի տուն» բառերը փոփոխել «1 հողամաս» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
30 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1125-Ա

29 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 <<ՀԱՍՄԻԿ>>, ԹԻՎ 3 <<ԾԻԾԵՌՆԱԿ>>, ԹԻՎ 4 <<ՁՆԾԱՂԻԿ>>, ԹԻՎ 6 <<ԱՐԵՎԻԿ>>, ԹԻՎ 7 <<ԶՎԱՐԹՆՈՑ>>, ԹԻՎ 9 <<ԱԻԴԱ>>, ԹԻՎ 10 <<ՈՍԿԵՀԱՏ>>, ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԵՎ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 23.12.2025թ. թիվ 17-Ն որոշումը, Վաղարշապատի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետի 22.07.2026թ. զեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների ուսումնասիրությունները.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մսուր-մանկապարտեզներ և մանկապարտեզներ հաճախող երեխաների ուսման վարձի և խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով

17 /տասնյոթ/ երեխաների ցանկը՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1126-Ա

«30» հուլիսի 2026թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ ԶԱՆԳՎԱԾ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 16 ՇԵՆՔԻ ԲԱԿՈՒՄ 04-002-0822-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԱԿԱԳՐՈՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՑԱՆԿԱՊԱՏԸ ԵՎ ԱՅԼ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ (ՔԱՆԴԵԼՈՒ) ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված թաղամասի թիվ 16 շենքի բակում 04-002-0822-0021 կադաստրային ծածկագրով Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման տարածքում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ տեղադրված մետաղյա ցանկապատը և այլ մետաղական կոնստրուկցիաները ապամոնտաժելու և հողամասն ազատելու վերաբերյալ հարցը, պարզեց որ.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի «ա» կետի՝ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժինը կատարել է համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման տարածքում Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված թաղամասի թիվ 16 շենքի բակում 04-002-0822-0021 կադաստրային ծածկագրով հողամասում տեղազննություն:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի 13.07.2026թ.-ի տեղազննության համաձայն՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված թաղամասի թիվ 16 շենքի բակում 04-002-0822-0021 կադաստրային ծածկագրով Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման տարածքում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության հողամասը սահմանազատվել է և ինքնակամ տեղադրվել է մետաղական թիթեղներով ցանկապատ:

Հիմք ընդունելով վերոգրյալը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի հիմքով Վաղարշապատի համայնքապետարանում 13.07.2026 թվականին հարուցվել է վարչական վարույթ:

Վարչական վարույթի ընթացքում լսումներ չեն անցկացվել՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգավորումները:

Գործի համար նշանակություն ունեցող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում՝ ձեռքբերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված թաղամասի թիվ 16 շենքի բակում 04-002-0822-0021 կադաստրային ծածկագրով Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման տարածքում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության անհայտ անձի և/կամ անձանց կողմից հողամասը սահմանազատվել է և ինքնակամ տեղադրվել է մետաղական թիթեղներով ցանկապատ և այլ մետաղական կոնստրուկցիաներ, իսկ դրանցով ծանրաբեռնված հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ անձի գրանցված որևէ իրավունք:

2. Վերոնշյալ ինքնակամ ցանկապատով և մետաղական կոնստրուկցիաներով ծանրաբեռնված է Վաղարշապատ համայնքի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողամասը, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ տեղադրված մետաղական թիթեղներով ցանկապատից:

3. Նշված ինքնակամ կառույցը փաստացի տեղադրված է Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման հողամասում՝ բակ /կադաստրային ծածկագիր 04-002-0822-0021/ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 14 հուլիսի 2005 թվականի թիվ 1109-Ն որոշմամբ հաստատված 4-րդ հավելված՝ կադաստրային ծածկագիր 02-004-822-001-01):

4. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից 13.07.2026 թվականին կազմված տեղազննությունը:

5. 13.07.2026 թվականին կատարված տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

6. Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծից հանված նշված հողամասի իրավիճակային հատակագիծը:

<u>Վարչական ակտ ընդունելու հիմքերը և հիմնավորումները.</u>

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 14 հուլիսի 2005 թվականի թիվ 1109-Ն որոշմամբ հաստատված 4-րդ հավելվածով՝ 02-004-822-001-01 կադաստրային ծածկագրով, որպես չմասնավորեցվող հողատարածք՝ բակ, պետական սեփականությունից փոխանցվել է համայնքին և հանդիսանում է համայնքային սեփականություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի համաձայն՝ համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է: Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերված սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք /յուրաքանչյուր ոք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:/:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Տիրապետման իրավունքը գույքը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Օգտագործման իրավունքը՝ գույքից դրա օգտակար բնական հատկությունները քաղելու, ինչպես նաև դրանից օգուտ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Տնօրինման իրավունքը՝ գույքի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 274-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իր գույքը հետ պահանջել ուրիշի ապօրինի տիրապետումից:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ինքնակամ զբաղեցված հողամասերը վերադարձվում են դրանց սեփականատերերին, օգտագործողներին՝ առանց հողային օրենսդրություն խախտողների կողմից այդ հողամասերի ապօրինի օգտագործման ժամանակահատվածում կատարված ծախսերի հատուցման:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի համաձայն՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

Հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

Ինքնակամ կառույցների անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով:

ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

գ) օրենքով նախատեսված ժամկետներում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով չեն հաշվառվել:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք բնակավայրերում ընդհանուր օգտագործման հողեր են (հրապարակներ, փողոցներ, ճանապարհներ, գետափեր, զբոսայգիներ, պուրակներ, այգիներ, լողափեր և ընդհանուր օգտագործման այլ տարածքներ):

Նույն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի՝ լսումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի ե) կետի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ՝ այն դեպքերի, երբ բողոքարկվում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին կայացված վարչական ակտ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն ակտով երրորդ անձնաց իրավունքներ կամ օրինական շահեր չեն շոշափվում և սույն ակտը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին է, ուստի սույն ակտը ենթակա է անհապաղ կատարման:

Այսպես, հիմք ընդունելով վերոգրյալը կարելի է ապացուցված համարել, որ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված թաղամասի թիվ 16 շենքի բակում 04-002-0822-0021 կադաստրային ծածկագրով /նախկին կադաստրային ծածկագիրը՝ 02-004-822-001-01/, Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, հողամասը սահմանազատվել է և ինքնակամ տեղադրվել է մետաղական թիթեղներով ցանկապատ և մետաղական կոնստրուկցիաներ, նշված կառույցը տեղադրված է այդ նպատակի համար չհատկացված՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ուստի ինքնակամը ենթակա չէ օրինականացման և օրենքի ուժով ենթակա է քանդման /ապամոնտաժման/:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 184-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մասի, 188-րդ հոդվածի, 274-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի, 60-րդ հոդվածի, 116-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 9-րդ հոդվածի 2-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 53-րդ, 58-60-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման պահանջները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Չօրինականացնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված թաղամասի թիվ 16 շենքի բակում 04-002-0822-0021 կադաստրային ծածկագրով Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ տեղադրված ցանկապատը:
2. Քանդել /ապամոնտաժել/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգված թաղամասի թիվ 16 շենքի բակում 04-002-0822-0021 կադաստրային ծածկագրով Վաղարշապատ համայնքին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր օգտագործման հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության ինքնակամ տեղադրված մետաղական թիթեղներով ցանկապատը և ազատել հողամասը:
3. Հանձնարարել Վաղարշապատի համայնքապետարանի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկին՝ աշխատակազմի ճարտարապետության, քաղաքաշինության և հողաշինության բաժնի աշխատակիցների օժանդակությամբ իրականացնելու սույն որոշման 2-րդ կետով սահմանված քանդման /ապամոնտաժման/ աշխատանքները:
4. Առաջարկել ՀՀ ոստիկանության ՀՈԳՎ Վաղարշապատի բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Վաղարշապատի համայնքապետարանի կողմից քանդման /ապամոնտաժման/ աշխատանքները կատարելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ Միհեր Մկրտչյանը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վաղարշապատ համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
8. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ որոշման դեմ վարչական բողոք բերելը չի կասեցնում դրա կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
30 հուլիսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1127-Ա

31 հուլիսի 2026թ. ք.Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հ. Այվազովսկու փողոցի թիվ 2-րդ փակուղու թիվ 7 տան բնակիչ Դավիթ Սարգսի Հարթենյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 05122025-04-0081 տրված 05.12.2025թ., «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 29.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022PSM2KDG, 04022NBRASMF/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի 11-րդ փողոցի թիվ 26 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 11-րդ փողոց թիվ 26/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 11-րդ փողոց թիվ 26 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 04463138

Ստորագրված է
31 հուլիսի 2026 թվականին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1128-Ա

31 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 27-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վազգեն Առաջինի փողոցի թիվ 40 շենքի թիվ 46 բնակարանի բնակիչ Թամարա Վրույրի Թադևոսյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 26082021-04-0050 տրված 26.08.2021թ., «Հռիփսիմե Արսենյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0503/ կողմից 26.06.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04022GMT77QS, 04022U5J6TFU/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի 27-րդ փողոցի թիվ 34 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 27-րդ փողոց թիվ 34/1 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր 27-րդ փողոց 34 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
31 հուլիսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1129Ա

31 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ (ՏՆՕՐԻՆԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ հոդվածով, 197-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա. Մանուկյան 2-րդ թաղամաս թիվ 69 տան հասցեի բնակիչ Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանի 26.06.2026թ. դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 22.07.2026թ. թիվ 10 նիստի թիվ 2 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանին /ծնված՝ 03.02.1977թ., նույն. քարտ՝ 006024202/ օտարելու (տնօրինելու) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իր անչափահաս երեխա՝ Անի Արմենի Վարդանյանին /ծնված՝ 02.12.2008թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 270388/ պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն բնակավայրի 7-րդ փողոցի թիվ 31 հողամասի /սեփականության վկայական՝ 19022024-04-0052/, 1/4 բաժնեմասը:
2. Հսկողություն սահմանել Անի Արմենի Վարդանյանի ծնող Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1130-Ա

31 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 31.07.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

Ստորագրող՝
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1131Ա

31 հուլիսի 2026 թ. ք. Էջմիածին

ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ (ՏՆՕՐԻՆԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ հոդվածով, 197-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Դողս բնակավայրի Անդրանիկ փողոցի թիվ 5 տան հասցեի բնակիչ՝ Սուսաննա Հովհաննեսի Մանուկյանի դիմումը և Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 22.07.2026թ. թիվ 10 նիստի թիվ 4 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Սուսաննա Հովհաննեսի Մանուկյանին /ծնված՝ 19.11.1952թ., անձնագիր՝ AT0413715/ օտարելու (տնօրինելու) ընդհանուր բաժնային համասեփականության իրավունքով իր անչափահաս թոռների՝ /05.06.2009թ., ծն. վկայական ԱԲ 010805/, Գոռ Պապիկի Մանուկյանին և /01.10.2011թ., ծն. վկայական ԱԲ 177120/ Էրիկ Պապիկի Մանուկյանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ բնակավայրում գտնվող 04-023-0115-0018 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի /սեփականության վկայական՝ 08072026-04-0101/, 2/9 բաժնեմասը:
2. Հսկողություն սահմանել անչափահասներ Էրիկ Պապիկի Մանուկյանի և Գոռ Պապիկի Մանուկյանի խնամակալ՝ Սուսաննա Հովհաննեսի Մանուկյանի գործունեության նկատմամբ:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1132Ա

05 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՈՍԿԵՀԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ, ԱՅԼ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՈԼՈՐ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ՎԻՃԱՐԿՎՈՂ) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ԽՈՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ԵՎ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-66-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2026 թվականի հունիսի 24-ի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միացման ձևով վերակազմակերպելու, նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Վաղարշապատ համայնքի 2026 թվականի ապրիլի 22-ի թիվ 73-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 150-Լ որոշման 4-րդ կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջև կնքված միացման պայմանագիրը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1133Ա

04 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի խորհրդական Նարեկ Խաչատրյանի զեկուցագիրը՝ QR կոդով, «Վաղարշապատի համայնքապետարան» գրվածքով տպագրված պայուսակներ ձեռք բերելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2026թ. բյուջեով նախատեսված համաքաղաքային միջոցառումների միջոցներից 370000/երեք հարյուր յոթանասուն հազար/ դրամ փոխանցել Էլբակյան ՍՊԸ-ին՝ նրա հետ կնքված պայմանագրով ֆինանսական պարտավորությունները կատարելու նպատակով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Recoverable Signature

X Ստորագրող՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ 3208860013

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1134-Ա

04 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 04-053-0609-0001/

Ղեկավարվելով Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 25082020-04-0022 վկայականը, տրված 25.08.2020թ. և 24.07.2026թ. Հովհաննես Կարապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել արտոնություն Վաղարշապատ համայնքի Ծիածան բնակավայրի վարչական տարածքում գտնվող Հովհաննես Վազգենի Կարապետյանին, Ռուզաննա Ռաֆիկի Սողոյանին, Մարիամ Հովհաննեսի Կարապետյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 04-053-0609-0001/ 0,3268 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության պտղատու այգու /կորիզավոր/ նկատմամբ, մինչև 2030 թվականի հունվարի 1-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

X Ստորագրող ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ 3208860013

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1135Ա

04 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԻԿՏՈՐՅԱ ՎՅԱՉԵՍԼԱՎԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 2-րդ մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, 36-րդ հոդվածով, 37-րդ հոդվածով և 38-րդ հոդվածով, և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631–Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Արագածի զանգված թիվ 1/1 շենքի թիվ 37 բն. հասցեի բնակիչ Անահիտ Համայակի Ղազարյանի 05.06.2026թ. դիմումը, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 29.05.2026թ. թիվ ԱՐԴ/0175/02/26 օրինական ուժ ստացած վճիռը, Վաղարշապատ համայնքի «Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի 22.07.2026թ. թիվ 10 նիստի թիվ 5 արձանագրությունը, ուսումնասիրություններն ու փաստերը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Արագածի զանգված թիվ 1/1 շենքի թիվ 37 բն. հասցեի բնակիչ՝ Վիկտորյա Վյաչեսլավի Ղազարյանի /ծնված՝ 12.06.1998թ., ծննդյան վկայական՝ ԱԱ 118277/, նկատմամբ սահմանել խնամակալություն՝ խնամակալ նշանակելով՝ Անահիտ Համայակի Ղազարյանին /ծնված՝ 12.01.1962թ., անձնագիր՝ AR 0317956/:
2. Հսկողություն սահմանել Վիկտորյա Վյաչեսլավի Ղազարյանի նկատմամբ խնամակալ նշանակված՝ Անահիտ Համայակի Ղազարյանի գործունեության նկատմամբ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Անահիտ Համայակի Ղազարյանին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ